սկսեալ, փայլածու, արուսեակ, երկիր կամ մայր Կիւբեղէ, և Հրատ, միջական մեծութեամբ արեգական մօտ պարունակներու վրայ կը պտըտին. իսկ արեգական հեռաւոր սահմաններուն մէջ կը քալեն չորս վիթխարի մոլորակներ, Լուսնթագ, Երեւակ, Ուրանոս և Պոսիդոն, մեծ մեծ պարունակներով։ Այս երկու խումբերս, որոնցմէ մէկուն վերջին սահմանապահն է Հրատը, ու մէկալին մերձաւոր սահմանապահն է Լուսնթագը, մէկմէկէ կը բաժնուին յիսուն մանր մոլորակաց գեղեցիկ կամարով մը, որոնք իրարու մօտ պարունակներու վրայ կը պտըտին, և որոնց գիւտը այս դարուս պարծանքներէն մէկն է։

Հետևեալ աղիւսեկին մէջ կը տեսնուի այս գիւտից ցուցակը դարուս սկիզբէն սկսելով.

1801. 1 մոլորակ. Դեմետրէ.
1802. 1 մոլ. Պալլաս.
1804. 1 մոլ. Հերա.
1807. 1 մոլ. Վեստա.
1845. 1 մոլ. Աստրէա.
1847. 3 մոլ. Հեբէ, Իրիս, Փլորա.
1848. 1 մոլ. Մէդիս.
1849. 1 մոլ. Հիւգէա.
1850. 3 մոլ. Պարթենոպէ, Վիկտորիա, Եգերիա.
1851. 2 մոլ. Իրենէ, Եւնոմիա.
1852. 8 մոլ. Փսիքէ, Թետիս, Մելպոմենէ, Փորտունա, Մասսիլիա, Լուտետիա, Կալլիոպէ, Թալիա.
1853. 4 մոլ. Թեմիս, Փոկէա, Պերսեփոնէ, Եւտերպէ.
1854. 6 մոլ. Պելլոնա, Ամփիտրիտէ, Ուրանիա, Եւփրոսինէ, Պոմոնէ, Պոլիմնիա.
1855. 4 մոլ. Կիրկէ, Լեւկոթէա, Ատալանտա, Փիդէս.
1856. 5 մոլ. Լեդէ, Եւխարիս, Արմոնիա, Դափնէ, Իսիս.
1857. 8 մոլ. Արիանէ, Նիւսա, Եւգէնիա, Պալէս, և այլն։

Այս բազմաթիւ գիւտերը մեր ժամանակի աստեղաբաշխից եռանդը, փոյթն ու ճարտարութիւնը կը ցուցընեն, և միանգամայն աստեղաբաշխական գործեաց կատարելութիւնը։ Այլ և այլ դիտարաններ երկինքը մէջերնին բաժներ են, և իւրաքանչիւրը իր մասին աստեղացոյց տախտակներ շիներ են, ուր ամենայն ճշգրտութեամբ նշանակուած են մինչուան իններորդ ու տասներորդ աստիճանի աստղերը։ Այս աստեղացոյց տախտակներով մանր մոլորակաց գիւտը շատ դիւրացաւ, վասն զի աստեղաբաշխք ամէն օր ասոնք երկնից հետ բաղդատելով թէ որ նոր պզտի աստղ մը տեսնեն որ դեռ նշանակուած չէ, ամենայն խնամքով կը դիտեն զայն, և կը նային արդեօք մօտի աստեղաց նկատմամբ շարժումն կը տեսնուի վրան. եթէ տեսնեն որ կը շարժի, ըսել է թէ նոր պզտի մոլորակ մըն է անիկայ։

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

Հին եկեղեցւոյ մը գիւտը։ Մօտերս Հռոմէն դուրս հինգ մղոն հեռու, Պռաւէրինի իշխանին մէկ կալուածին մէջ՝ որ Նէպտոլլայ սուրհանդակի ճամբուն քովերը կ'իյնայ, նոր գետնադամբանք գըտնուեր են հանդերձ հին եկեղեցւով մը, որ Ս. Ստեփանոս կը կոչուի։ Այս եկեղեցւոյն մէջ, որ Զ դարուն շինուած է, մինչուան հիմա գտեր են ընտիր ու յարգի մարմարինէ վեց սիւներ, ինչպէս նաև վերտառութիւններ։

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ

Լուսաւոր գիր հանել տալու հնարքը։

Չափաւոր հաստութեամբ պղնձէ տախտա[կի] վրայ ուզած գրերդ կամ ձեւդ (նոյնպէս պղնձէ) գամէ, բայց 5 հազարորդամետրի չափ աւե[լի] թանձրութիւն ունենայ, որպէս զի երբոր տա[խ]տակը տաքցընես՝ այն կտորուանքներուն տաքութիւնը աւելի երկար ատեն գիմանայ։ Ետ[և] ... տախտակին ետեւն ալ երկըթէ կոթ մը պէտք է ... լայ փայտէ գլխով՝ բռնելու համար։ Արդ ... տախտակը կը տաքցուի, ու տաք տաք ուժով ... թղթի մը վրայ կը կոխուի, որն որ առաջուընէ ... րեք չորս ծալք լաթի մը վրայ տարածուած պ... պատրաստ կենայ. կոխելուդ պէս՝ ան թուղթ... ու մութ տեղ տար, իսկ թէ որ գիշեր է՝ ճրագ... լոյսը ծածկէ. թղթին վրայ խորցած գիրերը կա[մ] ձեւերը լուսաւոր կ'երևան, մինչև որ թուղթը պ... ղի.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ